

ՎԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վարկատեսակի անվանումը	<<ՈՍԿԻ-ՊԱՐԶ-ՊԼՅՈՒՍ>> (ոսկու գրավով ապահովված)
Վարկի նպատակը	սպառողական
Պայմանները սահմանող մարմինը, որոշումը	<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ Վարչության 14.12.2023թ-ի թիվ 284 որոշում
Պայմանների գործողության ժամանակահատվածը	18.12.2023-03.02.2025թթ
Վարկի ձևակերպման վայրը	<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ Գլխամասային գրասենյակ, մասնաճյուղեր
Վարկի արժույթը	ՀՀ դրամ
Վարկի տրամադրման ձևը և վարկային պարտավորությունների կատարման (վարկի և տոկոսագումարի մարման) եղանակները	Անկանխիկ - վերականգնվող վարկային գիծ փոփոխական սահմանաչափով՝ ՄԻԱՅՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ (յուրաքանչյուր ամիս միայն տոկոսագումարներ, վարկը՝ ժամկետի վերջում վճարում), կամ - ԱՆՈՒՒՏԵՏԱՅԻՆ (վարկի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ գումարով վճարում) վճարման եղանակով
Վարկի նվազագույն գումարը	100.000 ՀՀ դրամ
Մեկ փոխառուին տրամադրվող վարկի առավելագույն գումարը	Չի սահմանվում
Վարկի ժամկետները	1. Մինչև 12 ամիս՝ - ՄԻԱՅՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ վճարման եղանակով 2. Մինչև 60 ամիս՝ - ԱՆՈՒՒՏԵՏԱՅԻՆ վճարման եղանակով
Վարկի նվազագույն տարեկան անվանական տոկոսադրույքը	16,4% - 1.000.000 ՀՀ դրամ գումարից ավել վարկերի համար 16,9% - մինչև 1.000.000 ՀՀ դրամ գումարով վարկերի համար
Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքների միջակայքը	17,95-18,53%
Վարկի մարման դադարի շրջանը	չի նախատեսվում
Տոկոսագումարների հաշվարկման կարգը	Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, տարվա օրացուցային օրերի քանակով
Անվանական տոկոսադրույքի փոփոխությունը	Վարկի անվանական տոկոսադրույքը մնում է անփոփոխ պայմանագրի գործողության ողջ ընթացքում
Ծառայության միանվագ վճարները	Վարկի գումարի 0,5%-ի չափով, բայց ոչ պակաս 1.000 ՀՀ դրամից և ոչ ավել 4.900 ՀՀ դրամից
Ժամկետանց վարկի տոկոսադրույքը	տարեկան 24%
Ժամկետանց տոկոսագումարի տույժը	օրական 0,13%
Պարտքի գանձման հերթականությունը	Տույժեր, տոկոսագումարներ, վարկի մայր գումար
Վարկի վաղաժամկետ մարումը	Վարկի վաղաժամկետ մարումը թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն սահմանվում: Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Ընկերության եկամուտը ձևավորող վճարները:

ՎԱՐԿԻ ԱՊԱՆՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Վարկի ապահովման միջոցները	Գրավ՝ ոսկյա իրեր, ձուլակտորներ, որոնք ընդունվում և գնահատվում են որպես ոսկու ջարդոն
---------------------------	-------------------------------------------------------------------------------------

Վարկի գումար/գրավի գրավադրման արժեք հարաբերակցությունը և վարկի և տոկոսագումարների վճարման եղանակները	110-130%, ընդ որում՝ -մինչև 110% հարաբերակցության դեպքում վարկային պարտավորությունները կարող են կատարվել ՄԻԱՅՆ ՏՈՎՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐ կամ ԱՆՈՒԻՏԵՏԱՅԻՆ վճարման եղանակով, -111-130% հարաբերակցության դեպքում վարկային պարտավորությունները պետք է կատարվեն ԱՆՈՒԻՏԵՏԱՅԻՆ վճարման եղանակով: Անկախ վերը նշված հարաբերակցությունից, մեկ փոխառուին (իր հետ փոխկապակցված անձանց) սույն վարկատեսակի շրջանակներում տրամադրված վարկերի հանրագումարի ոսկու գրավով չապահովված մասը չի կարող գերազանցել 600.000 ՀՀ դրամը:
Ոսկու գրավադրման արժեքները	Համաձայն Ընկերության իրավասու մարմնի կողմից սահմանված արժեքների
Գրավադրման հետ կապված ծախսերը	Բացակայում են

ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հաճախորդի տարիքային սահմանափակումները	Չի սահմանվում
Երաշխավորի պահանջը	Չի պահանջվում
Ապահովագրության պահանջը	Չի պահանջվում
Հաճախորդի վարկային պատմության նկատմամբ պահանջները	-Վարկի տրամադրման օրվա դրությամբ հաճախորդի գործող վարկերը և երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց և չունենան ժամկետանց տոկոսագումարի և տույժի պարտք: -Հաճախորդի սպասարկվող և մարված վարկերի գծով ժամկետանց օրերի ընդհանուր քանակը վերջին 6 ամսում չպետք է գերազանցի 30 օրը: - Վարկի վերաֆինանսավորման դեպքում վերաֆինանսավորվող վարկը չպետք է դասակարգված լինի <<ստանդարտ>> դասից ավելի խիստ դասով, վարկի գծով ժամկետանց օրերի ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 30 օրը: -Ելնելով վարկային հայտի առանձնահատկություններից, Ընկերությունը կարող է պահանջել նաև հաճախորդի եկամուտները և/կամ սեփականությունը հիմնավորող փաստաթղթեր, հաճախորդի փաստացի ընտանիքի կազմի վերաբերյալ կամ հաճախորդի վարկունակությունը հիմնավորող այլ տեղեկություններ:

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վարկի տրամադրման դրական գործոնները	- ներկայացված հայտը համապատասխանում է սահմանված պայմաններին ու պահանջներին - Ընկերության համար ընդունելի է հաճախորդի վարկային ծանրաբեռնվածությունը
Վարկի մերժման գործոնները	- ներկայացված հայտը չի համապատասխանում սահմանված պահանջներին, - հաճախորդը ունի ժամկետանց կամ դասակարգված գործող վարկային պարտավորություններ կամ նախկինում անպատշաճ է կատարել իր վարկային պարտավորությունները, - Ընկերության մասնագետի կարծիքով, գրավադրման ներկայացված իրերը բավարար կամ ընդունելի չեն, - հաճախորդը, Ընկերության կարծիքով, խիստ ծանրաբեռնված է վարկային պարտավորություններով /մասնավորապես՝ առանց ապահովման վարկերով/, - վարկի իրական շահառուն այլ անձ է
Որոշում ընդունելու և վարկը տրամադրելու ժամկետները	Վարկային հայտը /ներառյալ պահանջվող փաստաթղթերը/ ներկայացնելու օրվա ընթացքում
Հաճախորդի հետ հաղորդակցման կարգը	Հաճախորդի ընտրությամբ՝ էլ.փոստով, փոստով, Ընկերության գրասենյակում <i>Էլեկտրոնային եղանակով հաղորդակցումը ամենահարմարավերս է: Այն հասանելի է հաճախորդին 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:</i>
Վարկի քաղվածքների /կրկնօրինակների/, այլ տեղեկությունների տրամադրման կարգն ու ժամկետները	Վարկի քաղվածքները /կրկնօրինակները/ տրամադրվում են անվճար, մեկամսյա պարբերականությամբ, հաճախորդի նախընտրած եղանակով: Այլ տեղեկությունները տրամադրվում են համաձայն Ընկերության „Այլ ծառայությունների սակագներ,-ի /հրապարակվում են www.bless.am կայքում՝ Այլ ծառայություններ-Այլ սակագներ հղմամբ/
Գրավը վերադարձնելու ժամկետը	Վարկի ամբողջական մարումից հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում
Մտածելու ժամանակը	Վարկառուն իրավունք առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ վճարելով վարկի օգտագործման համար տոկոսներ, հաշվարկված վարկային պայմանագրում նշված տարեկան փաստացի տոկոսադրույքով:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Անհրաժեշտ փաստաթղթերը	Անձնագիր /նույնականացման քարտ/, Հանրային ծառայությունների համարանիշ (սոց. քարտ)
Ներկայացման կարգն ու ժամկետները	Վարկային հայտի ներկայացման հետ միաժամանակ
Այլ փաստաթղթերը	Ընկերությունը կարող է իր ներքին իրավական ակտերով և/կամ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ բանավոր տեղեկություններ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտոնություններ	<ul style="list-style-type: none"> - Վերաֆինանսավորված (այլ վարկատուից տեղափոխված) վարկերի համար – սահմանված տոկոսադրույքներից 1%-ով ցածր տոկոսադրույքներով, - Վերաֆինանսավորված (այլ վարկատուից տեղափոխված) վարկերի համար վարկի տրամադրման վճարը սահմանվում է՝ 0 ՀՀ դրամ:
-----------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------